ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատի քաղաքային համայնք,
ք. Արարատ, Շահումյան 34, հեռ. /0238/4-47-47, էլ. փոստ՝ araratcity@mail.am

ՈՐՈՇՈՒՄ

<<30>> նոյեմբերի 2012 թվականի N 50

ԱՐԱՐԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔԻ ՀԱՇՎԵԿՇՌՈՒՄ ԳՏՆՎՈՂ «ԱՐԱՐԱՏ» ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ԿԱՅԱՐԱՆԻ ՏԱՐԱԾՔԻ ՇԵՆՔԵՐԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման Մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 31-րդ կետի 2-րդ մասով

ԱՐԱՐԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ
ՈՐՈՇՈՒՄ Է՝ /որոշում 50/

1. Արարատի քաղաքային համայնքի հաշվեկշռում գտնվող «Արարատ» Երկաթուղային կայարանի բնակելի շենքերի զբաղեցրած հողատարածքների հարցին լուծում տալու խնդրանքով ուղերձով դիմել ՀՀ Փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարար պ-ն Ա. Գևորգյանին: /Ուղերձը կցվում է, հավելված 5/:
2. Սույն որոշումը և ուղերձը ներկայացնել ՀՀ Արարատի մարզպետ պ-ն Է. Բաբսեղյանին:

Ավագանու անդամներ՝

1. ԱՐՏԱԿ ԳԱԼՍՏՅԱՆ
2. ԱՐԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ
3. ՀԵՆՐԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ
4. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԳԵՎՈՐԳՅԱՆ
5. ԿԱՐԵՆ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ
6. ԱԶԱՏ ՀԱԿՈԲՅԱՆ
7. ԱՐՄԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
8. ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ
9. ՄԱՐՏԻՆ ՆԱԴԱՐՅԱՆ
10 ԻԼՅԻՉ ՇԱԴՅԱՆ
11 ԿԱՄՈ ՍԱՐԳՍՅԱՆ
12 ԱՐԿԱԴԻ ՍՏԵՓԱՆՅԱՆ
13 ԺԱՆՆԱ ՏԵՐ-ԱՆՏՈՆՅԱՆ
14 ՄԱՐՏԻՆ ՕՐԴՈՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԲԱԲԱՅԱՆ

Հավելված 5
Ուղերձը ընդունվել է Արարատի
քաղաքային համայնքի ավագանու
2012թ. նոյեմբերի 30-ի թիվ 10 նիստի
50 որոշումով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐ ՊՐ-Ն Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ
ՈՂՂՎԱԾ ԱՐԱՐԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՒՂԵՐՁԸ

Արարատի քաղաքային համայնքի հաշվեկշռում գտնվող <<Արարատ>> երկաթուղային կայարանի բնակելի շենքերի զբաղեցրած հողատարածքի մասին

Հարգարժան պր-ն Գևորգյան

ՀՀ Կառավարության 2006թ. հունվարի 19-ի թիվ 32-ն որոշումով հաստատվել է Հայաստանի Հանրապետության Արարատի քաղաքային համայնքի /բնակավայրի/ գլխավոր հատակագիծը, սակայն այդ հատակագծում տեղ է գտել անճշտություն:

Արարատի քաղաքային և Արարատի գյուղական համայնքների վարչական սահմանների համար բաժանարար գիծ է ընդունվել Երևան-Երասխ երկաթգիծը, ըստ որի <<Արարատ>> երկաթուղային կայարանի և կայարանի բնակելի թաղամասի շենքերի զբաղեցրած հողատարածքը դուրս է մնացել Արարատի քաղաքային համայնքի վարչական տարածքից և այն ներառվել է Արարատ գյուղի վարչական տարածքում, այն դեպքում, երբ բնակելի այդ թաղամասի բնակիչները ի սկզբանե համարվում են Արարատ քաղաքի բնակիչներ, անձնագրերով հաշվառված են Արարատ քաղաքում, քաղաքի ընտրողներ են, Արարատ գյուղի հետ առնչություն չունեն, ժամանակին չեն օգտվել հողի սեփականաշնորհումից: <<Արարատ>> երկաթուղային կայարանի բնակելի շենքերը Արարատ քաղաքային համայնքին է հանձնվել ՀՀ Կառավարության 1997թ. մարտի 14-ի թիվ 51 <<Համայնքի սեփականության գույքի ցանկը սահմանելու մասին>> որոշման համապատասխան, ըստ որի <<Արարատ>> երկաթուղային կայարանի բնակելի շենքերը երկաթուղու Երևանի քաղաքացիական կառուցվածքների հաշվեկշռից անվարձահատույց հանձնվեց Արարատի քաղաքային համայնքի հաշվեկշռին:

Բնական է, որ բնակելի շենքերը հանձնվել են իրենց զբաղեցրած հողատարածքներով: Սակայն այդ շենք-շինությունների զբաղեցրած հողատարածքները ներառված են Արարատ գյուղի վարչական տարածքում և նշված թաղամասի բնակիչների հետ կապված առանձին հարցեր, մասնավորապես նրանց պատկանող անշարժ գույքի պետական գրանցումը կադաստրի պետական կոմիտեն չի կատարում՝ պատճառաբանելով, որ դրանք գտնվում են Արարատի գյուղական համայնքին պատկանող հողատարածքի վրա: Արդյունքում բնակչությունը տուժում է նման երկակի վիճակից:

Խնդրվում է Ձեր աջակցությունը ՀՀ Կառավարության վերոհիշյալ որոշման համապատասխան, լուծել <<Արարատ>> երկաթուղային կայարանի բնակելի շենքերի զբաղեցրած հողատարածքը Արարատի քաղաքային համայնքին ամրագրելու հարցը:

Արարատի քաղաքապետարանի և երկաթուղային կայարանի բնակչությանը լուրջ մտահոգություն պատճառող այս հարցի մասին թեև ժամանակին մի քանի անգամ տեղյակ պահվել է պատկան մարմիններին և նախագծողներին, սակայն այն իր լուծումը մինչ այժմ չի ստացել: